

մը վերայ, 20 տող, շատ լաւ մնացած (թ. լի. Պ Սէյսի, թ. Ը. Շուշբի): Մորդման մեկնեց վերոյզրեալբը:

ԽԵ. Վանայ Սուրբ Ռահակ եկեղեցւոյ մէջ, քարի մը վերայ որ խօրանի տակն է, 40 տող քիչ շատ չնջուած սկիզբները և վերջերը Օրինակեց Լեյէրդ. հրատարակեց և մեկնեց առաջին անգամ Պ. Այսու: Նոր մեկնութիւն մի ևս նոյն իմաստունն հրատարակեց Անցելոց թիջատակարանաց մէջ. Դոր Շար. Դ, Էջ 444:

ԽԶ. Նոյն եկեղեցւոյ մէջ պատին ազուցուած քարի մը վերայ, 17 տող, վերինէն աւելի չնջուած: Օրինակեց Լեյէրդ. հրատարակեց և մեկնեց առաջին անգամ Պ. Այսու:

ԽԵ. Աղեքսանդրապոլէ գրեթէ 8 հազարմետր հեռու, Ղանլըճա գիւղի և Մարմաշինու մօտ, Ալիուրեանի հովտին մէջ. հինգ տող խխտ լաւ վիճակի մէջ: Գտաւ և հրատարակեց Քէստներ Ս. Գետրրուրդի Ժողովածոյք ասիական թերթի մէջ Պ. Էջ 675. Նոյնպէս Ս. Գետրրուրդի Ակագեմիոյ թերթին մէջ հատ. լ., Էջ 378: Հրատարակեց և մեկնեց Մորդման (թ. ԽԶ), և Պ. Այսո (թ. ԽԲ) և Ստան. Գիւիարդ: Հրատարակեց նաև Հ. Ղեռնդ Վ. Ալիշան. Շիրակ, Էջ 454: Հայազդի բանասէրներէն

մին Կ'րնթեռնու Մինուա, Երան, Իսկիկուզ, Շատաշան անուանին այս արձանագրութեան մէջ:

ԽԾ. Վանայ Ս. Գետրու և Ս. Պազման եկեղեցւոյ մէջ (ածո թ. ԼԱ) խորանի ձախակողմեան⁽¹⁾ աւանդասան ճակտի վերայ 34 տող, բաւական չնջուած: Օրինակեց և հրատարակեց Շուշբ (թ. ԼԸ), և Հ. Ներսէն Վ. Մարզիսեան (թ. Ե): Օրինակեց Լեյէրդ, կազապարեց կեւտրն. հրատարակեց և մեկնեց Մորդման. ես ևս օրինակեցի:

ԽԹ. Վանայ քարագերին հարաւակողմի, քարայրի մը մէջ, զոր թուրք խոզիմէ Գափուտու կ'անուանեն, այսինքն՝ Գանձոց դուռն, որոյ վերայ Հայք քանդակած են յուղրածն խաչ մը. 29 տող է, բաւական լաւ մնացած: Օրինակեց և հրատարակեց Շուշբ (թ. ԺԲ), կազապարեց Լեյէրդ, հրատարակեց և մեկնեց Մորդման (թ. Խ). օրինակեց Լեյէրդ, օրինակեց և հրատարակեց Հ. Ներսէն Վ. Մարզիսեան (թ. Զ): Լուի Շորերտ ևս մեկնելով հրատարակեց:

Հարայարելի

1. Խորանի աշակողմեան աւանդասան ճակտի վերայ ևս կայ մի այլ արձանագրութիւն. բայց այնպէս աւրուած: որ օրինակել անհնար է:

ԱՐԱՐՈՒ ՀԱՆԴԻՍՆ

ՍԱՅԱՆ Ք ՀՆՈՐԻԱԿԱՂՈՒԹԵԱՄԻ Արագսի 1895 տարւոյ առաջին գիրքը, որոյ վերայ կարեւոր կը համարինք փոքրիկ տեղեկութիւն մի տալ Բազմանիպի այն ընթերցողաց, որը չեն տեսած զայն, գուցէ ոմանկ և ոչ անունը բած այս կարեւոր հանգիսին:

Սա կը հրատարակուի Ռուսաստանի մայրաքաղի մէջ՝ Պետրուրդ, ընդ խմբագրութեամբ տէր Ս. Գուլամիրեանց, աարին երկու անգամ: իւրաքանչիւր հատորոյ սու-

լիրական ստուրութիւնն է տասներկու ուժածալ թերթ՝ նկարոց տուննին քարտեսներէն զատ. իսկ վերջին հատորը կազմուած է քասն թերթերէ: Այս՝ հանդիսիս արտաքին նկարագրին է:

Գալով ներկնոյն, « գրական եւ գեղարվեստական պատկերազարդ հանդիս » մ'է այն: Ես արդարեւ հաւատարիս ննալով իւր « գրական և կոչման՝ յոյժ շահեկան յօդուածներ կը ներկայացնէ նա մեզ: Մասնաւորե-

լով մեր խօսքը վերջին համարայն վերաց : յիշենք համառօտի անող բովանդակութիւնը :

Ճոխ եւ հմտալից յօդուած մի՛ մեզ ծանօթ եւ մերձաւոր մեծ խնդրոյն վերայ , անոր ոկրէն մինչեւ ցարդ տասցած պէս ոգէս գունոց միահաղոյն նկարագրութեամբ : — « Մի տեսութիւն՝ հայկական կիլիկիոյ հարրատութեան վրայ » , որ է Ծուրբինեանց ի կիլիկիո կատարած զերի նկատմամբ ընդուռակ յօդուած մի . որ թէպէտ շատ նորութիւններ շրովանդակի ցինքեան , բայց ժանօթ տեղեկութեանց մի գեղեցիկ ամփոփումն է՝ ճարտար խորհրդածութեամբք հանդերձ :

Ապա կու գոյ տեղագրական մասն , որոյ միակ եւ միանդամայն հետաքրյական յօդուածն է . և Սարքն , նրա նկարագրութիւնը , ընակիները եւ նոցա բարք ու վարքը » : — Յետոյ մատենագրական՝ որոյ մէջ կան ծանօթ հայ զիսպասնին՝ Պերճի Պոչշեանց ժողովրդական մի վիպակի՝ « Որտորդ բաղդակոն » , եւ քանի մի բանաստեղծամբիւնը այլոց : — կենսագրական , կիլիկիոյ հանդուցեալ տէր Մկրտիչ կաթողիկոսի , եւ համառօտի նա եւ նորընարին վերայ : — Մատենախօսական , յորում « Հ . հարցի մասին մի գիրք » վերնագրոյն ներբքյ տեղեկութիւն կը տրամի անզգերէն լեզուա . հրատարակուած ծանօթ մատենին վերայ : — Ապա արիշ այլ եւ այլ փոքր և մեծ յօդուածներ նոյն նիւթոյն նկատմամբ : — և ի տէր հանգ . Ներսէս պատրիարքի կատակը » , որ է նորա մի կարեւոր յիշատակարան՝ եւրոպական օրագրէ մի թարգմանուած : — Խրիմեան Հայրիկի ի Պետրոսը բուրգ անցուցած օրերը՝ պատկերօք . եւ այլն :

Ահա Ալբասի զատկան ընտիր բովանդակութիւնը , որոյ արժանիքն յայնմ է մանաւանդ՝ որ զրեթէ ամբողջովին ազգային է : Որոյ մէջ չէ կարելի որ աշքէ վրիփի նա եւ իւր լեզուն , այն բնդարձակ ծաւալովն իսկ ազատ օտար բառից կուտակութիւններէ եւ սակաւ ուրեք գործածած . որոյ նմանը մենք չենք տեսներ քնաւ տուսահայց միւս հանդիսէն եւ օրագրաց մէջ թայտնի կ' երեւի թէ մեծ խնամ կը տանի խմբագրութիւնը նիւթոց հետ նու եւ լեզուին . յոյժ գովելի է այդ պայմանը :

Այսուհետև կը յաջորդէ գեղարուեաւածնականը , որ է նկարչականը : Վան զայտ յառաջ արդէն կան արեց արեց արիշ պատահերներ այլ . բայց հս աւելի ճափ եւ փառաւոր : իւրաքանչիւր հատոր սովորաբար կը բովանդակէ քսան եւ շրս նկարներ . իսկ վերջին վամծուն եւ շրս , որոց քսան եւ շրս մեծացիր եւ պէս պէտք են տպուած , եւ մեծ մասն հայկական տեսարաններ եւ գէմիեր կը ներկայացնեն : Բոլոր նկարները միշտ ընտիր են , զնդադապ՝ յետ լուսանկարի , հրաշալի նրբութեամբ : Նկարոց նիւթերը ճաշակու են ընտրուած , եւ ուսանը նշանաւոր նկարչաց գործոց ծրինակներ են :

Ալբաս այս մասամբ ոչ միայն հայ օրակրութեան մէջ չունի իւր նմանը . այլ եւ եւ բուզացի շքեղ հանգիսից հետ կը մրցի : Զայս եւրոպացից այլ կը վկայեն : Լոնդոնի անզիսպական Ալբազանգ (Echo) լրագիրը գրած է . « Ալբաս ոնոյ բարձր եւ մնանով յառաջննեաց՝ արեւմուտիքի առաջնակարգ հանգիներից յետ չի մնար » : Համառու ըսննը , մեր ազգի քաջազգականորէն զարգացման վեմագոյն կոթողն է Ալբաս իւր տեսակի մէջ :

Սակայն արաիսի տիսուք աղղեցութեամբ մի կը համակուի մարդ , երբ այդափսի շբնադ հանդիսի մէկ իիի մէջ յանկարծ կը հանդիպի այսպիսի մի խօսքի . « Ավասն որ բաժանորդագրութեան կանոնաւոր եւ կանիփկ շինարուելը պատճառ է զառնում այսպիսի մի կարեւոր հրատարակութեան դադարևման » : Եւ թէ « ստիպուած ենք... 1895 տարեցը շանի երկրորդ զիրքը եւս հրատարակելով՝ գոցել եւ դադրեցնել Ալբասի հրատարակութիւնը » : Ցաւ մ' է այս , յորմէ ազատ չէ զդրազդաբար ոչ մի հայ խմբագիր :

Ի սէր ազգին կը յարգորենց Ալբասի բաժանորդները , որք անշոշտ շեն ցանկար ազգին այսպիսի օգսաշատ եւ պատարեր հանգիսէ մի զրկման , ջանալ կանոնաւոր եւ կանիփկ վճարել սահմանեալ 10 փրանի բաժանորդագինը , որ ըստ ինքեան ոչ ինչ է անոր մեծ արժանաւորութեան առջեւ : Կանիփկ վճարել , ըստ որում աւելի այսի կանուած . և Ալբասի յարատեւութիւնը , քան

թէ բաժանորդաց առաւելութենէն ; որ եւ ա-
սոր ոչ նուազ կարօտութիւն կը յայտնէ տէր
խմբագիրն :

Հ. Վ. Հ.

Այսպսի խմբագրութեան հասցէն է ,

St. Pétersbourg. Simeon

Goulamiriantz. կամ

C. — Պետերբուրց. Симеонъ Гуламирянцъ

ՀԱՄԱՅՆԱՐԴԻ ՀԱՆԴԻՍԱԴՐՈՒԹԻՒՆ Ի ՎԵՆԵՏՍ

Գ Ե Ղ Ա Ր Ո Ւ Ե Ս Տ

ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ . — ԱՐՁԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

(Տես Հա. ԵԳ յ՛էջ 519)

ԲԵՏՏԱ ԿՈՐՐԱԴՈՑ . — Ծնած է յլլատի-
զիանոյ ի 22 յուլիսի 1870 ամին . իսկ ապա
երկրտասահմանեայ ընտանեաց հետ երթարով
ի Տորին , արձանագործական գործարանի
մի մէջ դրուեցաւ . յորմէ դարձեալ անցաւ
արձանագործ Տարակեայ ուսումնարանի մէջ ;
Որդիական պարուք և հարկն զինքն ասիսե-
ցին իրեւ ձուրոյ աշխատելու թէ իւր վար-
ժապետին և թէ ուրիշ հանճարեղ արուես-
տագիտաց համար . իւր պարապոյ ժամանու-
ատեն չկարենայով ի ճեմարան յաճախել ,
նա առանձին կ' ուսումնասիրեւ , և կ' որ-
տուէր այն հրահանսներէւ , որոյ յաճախ կու
տային իրեն իւր հետ կենակցող արձանա-
գործք : Առաջին անգամ (1894) ներկայա-
ցուց Տորինի Յառաջադիմական ընկերութեան
(Promotrice) ճշմարտապատկեր գորչմած մի
(médaillon au vrai) « իմ մայր » , և աւ-
հաւ մի յետոյ ի զլուկ տարաւ « Աւադին
սէրէր » խորաքանդան , և ապա « Վթին
կազա » կիսանդրին . (Տես Զ) :

ՏՐՈՒՔԵՑԿՈՑ ՊԱԼԿՈՑ . — Ուսւ ազնուա-
կան և հարուստ ընտանեաց ծնունդ լինելով
(16 փետրուար 1866) , երիտասարդութիւնն ալ
իւր վիճակին յարմար պերճութեանց մէջ ան-
ցուցած է : իւր պատանեկութենէ ի վեր հե-
տամուս էր ձիեր ձեւացնելու և զլուխներ
գեագերելու , և այսպէս միայնակ կ' աշխատէր
ինքինքը կատարելագործելու արձանագոր-
ծութեան արուեստին մէջ , յանախով արտա-
յայտել կամ ձեւացնել գաճով՝ ինչ որ իրեն
հանոյ կ' երկէր , առանց ուշ դնելու արձա-
նագործական այս կամ այն յեղանակի կամ
դրութեան : Մորա գործերն ընդհանրապէս
շարժման արտայայտութիւններ են : Տրուքց-

կոյ շատ կենդանագրեր յօրինած է և քանի
մի յուշարձանաց (տոպոմետ) նախագծեր ,
ինչպէս են Ամէտէս իշխանին , Փանտի գո-
րավարին , Գարիբալդիին և Դանտէ Ալի-
կիէրիին . յորում ցուցուց որ ինքն խորին
կերպով ըմբռներ է աստուածային գերդադին
ողին : Ներկայապէս կը պարապի ի զուխ
տանելու կաղողոնա յուշարձանը : Ճշգրիտ
կերպարանի լինելով կենդանեաց՝ զծագրած
է բազմաթիւ ցեղեր շանց , ձիոց և ամենազգի
կենդանեաց : իւր գլխաւոր գործերէն մին
կրնայ համարուիլ « Ազդեցութիւնն ի ճշ-
մարտէն » անդրին . (Տես Զ) :

ՌՈՒ ԱՂԲԻՑ . — Ծնաւ ի Պարիսի ի 10
մարտի 1847 : իւր գործոց նպատակն էր
ճշգրիտ արտայայտել , իւր մեծագիր նկարնե-
րու մէջ , այժմեան ընկերական կեանքն , ինչ-
պէս են « Աշխատութիւնն » , « Պատերազմ » ,
« Գործադուլ բովանատաց » : իւր նկարուց
զինաւոր բնագրուշը կը կազմեն գործաւո-
րաց կեանքն և անոնց խեղճութիւնը : Մեծ
համբաւ ստացաւ և Տուլյուս ոլորումն « Նկա-
րով , որ կը ներկայացնէ որտաշարժ եաստ-
ան մը գեղջկական խումբի , որ շրջապա-
տեալ լինելով լրոց սպառնալից ողողմանէն ,
ապահուած է տանիքի մը վրայ : Բոլ ունի
ևս կենդանի գունով գիւղական նկարներ ,
յօրս առաջին տեղին կը գրաւէ « Գործաւորք
երկիր » . (Տես Ե) :

ԳՄԻՄԵՆԵՍ ՀԵԿՑՈՑ . — Ծնաւ ի Պատերազմ
յամին 1855 Յետս աւարտելու գեղեցիկ դը-
պլութեանց շրանք , հետամուտ եղաւ գե-
պարուեստից մանաւանդ արձանագործու-
թեան , և նախ յաճախեց Պալերմոյի Ակա-
դեմիան , յետոյ նէտապուոյ , ուր սովորեցաւ